

С. С. СПАНДАРЯН, *Статьи, письма и документы*, Москва, 1958, 360 стр.

Ս. Ս. ՍՊԱՆԴԱՐՅԱՆ, *Հոդվածներ, նամակներ եւ փառալուծղծներ*, Մոսկվա, 1958, 360 էջ:

Քաղաքական գրականության Պետական հրատարակչությունը Մոսկվայում ռուսերեն լեզվով յուրս ընծայեց Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչ, Վ. Ի. Լենինի տաղանդավոր աշակերտ և մարտական զինակից Սուրեն Սպանդարյանի բնօրինակ բերկերի ժողովածուն: Ականավոր բոլշևիկ—լենինյանի գրական ժառանգությունը Սովետական մեծ Միության ընթերցողների սեփականությունը դարձնելը միանգամայն ողջունելի բայլ է:

Ս. Սպանդարյանի սույն ժողովածուն հանդիսանում է ՀԿ(Բ)Պ Կենտկոմին կից Կուսպատի 1939—1940 թթ. կազմած ժողովածուի վերահրատարակությունը: Ներկա հրատարակությունում կատարված է նյութերի խիստ ընտրություն (այս ժողովածուի մեջ չեն մտել Ս. Սպանդարյանի նախորդ հրատարակության մեջ զետեղված հոդվածներից մոտ 27-ը, հարազատներին գրած նամակներից և ժանդարմական փաստաթղթերից մի քանիսը), շտկված են նախորդ հրատարակության ներածականում, ծանոթագրություններում տեղ գտած անճշտությունները և ամենակարևոր՝ նոր ժողովածուի մեջ զետեղված են նոր փաստաթղթեր, ինչպիսիք են՝ Ս. Սպանդարյանի գրած «Պարտիական կոնֆերենցիայի հրավերման ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովի ծանուցումը», Վ. Ի. Լենինի գրած նամակը Գ. Կ. Օրջոնիկիձեին և Կենտկոմի Ռուսական Բյուրոյի մյուս անդամներին, Ս. Սպանդարյանի արտոյից Վ. Ի. Լենինին գրած մի քանի նամակներ, հորը՝ Սպանդար Սպանդարյանին Հեյդելբերգից 1905 թ. ապրիլի 22-ի գրած նամակը, կնոջը՝ Օ. զա Վյաչեսլավովնային 1913 թ. հոկտեմբերի 7-ի և 1915 թ. դեկտեմբերի 19-ի գրած նամակները: Լեյս նոր վավերաթղթերը զետեղվելով ժողովածուում, որպես Ս. Սպանդարյանի գրած և նրան վերաբերող փաստաթղթեր, նոր յուրս են սփռում Ս. Սպանդարյանի գործունեության վրա, իրեն պարտիական շինարարի՝ ինչ-

պես նրան որակել են բոլշևիկյան պարտիայի հին սերնդի ներկայացուցիչները, ցույց են տալիս Ս. Սպանդարյանի անհուն սերն ու անսահման նվիրվածությունը պարտիային, համայն աշխարհի պրոլետարիատի և պրոգրեսիվ մարդկության հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինին:

1905—1907 թթ. ռուսական առաջին ռեոլյուցիայի պարտությունից հետո վրա հասավ ստոլիպինյան սև ռեակցիայի ժամանակաշրջանը: Տիրեց ռանկում, բարոյալքում, պառակտումներ, տարրեթացություն, ռենեգատություն, պրոնոգրաֆիա քաղաքականության փոխարեն» (Լենին). ռեոլյուցիոն մարքսիզմին հավատարիմ մնաց լենինյան զվարդիան, որի անխոնջ, արի ու անվախ զինվորներից էր Սուրեն Սպանդարյանը: Ստոլիպինյան ծանր և փորձություններով լի տարիներին մազաշափ անգամ չընկճվեց անվեհեր բոլշևիկը: Ընդհակառակը, նա էլ ավելի եռանդով ծավալեց իր ռեոլյուցիոն գործունեությունը: «Գիտակից բանվորի սրբոտում,— գրել է Ս. Սպանդարյանը 1907 թ. հունիսի 20-ին,— պետք է էլ ավելի ուժեղանա զզվանքն ու ատելությունը դեպի այդ հրեշավոր, զարշելի և արյունոտ ցարիզմը: Մեր մեջ պետք է էլ ավելի ամրապնդվի նրա դեմ կռվելու, այն տապալելու անհողողող վճռականությունը»:

Ստոլիպինյան ռեակցիան շատ երկար շտեղեց և չէր կարող երկար տևել: 1910—1911 թթ. սկսվեց ռեոլյուցիոն շարժման նոր վերելք Ռուսաստանում: Ռեոլյուցիոն նոր վերելքը գլխավորելու, այն իր հաղթական վախճանին հասցընելու համար հարկավոր էր պարտիան մարքել կազմալուծիչ տարրերից: Դրա համար պետք էր հրավիրել պարտիական համառուսաստանյան կոնֆերանս, պարտիայից վտարել լիկվիդատորներին, վերածնել բանվոր դասակարգի ափանգարդը, նրան նոր գրոհի նախապատրաստել:

¹ С. С. Спандарян. Статьи, письма и документы, Москва, 1958, էջ 102:

1911 թվականի մայիսին Համառոտաստանյան պարտիական կոնֆերանս հրավիրելու համար Վ. Բ. Լենինի նախաձեռնությամբ րուտեղծվեց Արտասահմանյան կազմակերպական հանձնաժողով (ԱԿՀ), որի լիազորությամբ Ռուսաստան ուղարկվեց աննկուն բոլշևիկ Գ. Կ. Որջոնիկի՝ 1911 թ. սեպտեմբերին նախ Բարվում, ապա Թիֆլիսում կայացած պարտիական խոշորագույն կազմակերպությունների խորհրդակցությունում ընտրվեց Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողով (ՌԿՀ), որի կազմում ընտրվեցին՝ Գ. Կ. Որջոնիկի, Ս. Գ. Շահոյան, Ս. Ս. Սպանդարյան, Ի. Ի. Շվարցը (Սեմյոն), ՌԿՀ-ն Գ. Կ. Որջոնիկիին գլխավորությամբ հսկայական կազմակերպական աշխատանք տարավ պարտիայի 6-րդ (Պրագայի) կոնֆերանսի նախապատրաստման ուղղությամբ:

Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովի ծանուցագիրը գրել է Ս. Սպանդարյանը: Ծանուցագրում, պարտիական այդ կարևորագույն փաստաթղթում, Սուրեն Սպանդարյանը լենինյանին հատուկ համարձակությամբ նայելով ճշմարտության երեսին, նախ ցույց է տալիս պարտիայի ծանր վիճակը տվյալ էտապում: «Մենք ճգնաժամ է ապրում մեր պարտիան,— գրում է Սպանդարյանը,— ահա արդեն երրորդ տարին է, ինչ չկան կենտրոնական պարտիական հիմնարկներ, չկա տեղերում պարտիական աշխատանքը միավորող և ուղղություն տվող օրգան, չկա պարտիական բանվորական մասսայի հասարակական կարծիքը շատ թե քիչ ճիշտ ու լրիվ առտաջողությամբ բավականաչափ հեղինակավոր ու գործունակ կենտրոն»:

Այնուհետև Սպանդարյանը նշում է, որ Համառոտաստանյան պարտիական կոնֆերանսը ռմիսկն է, որ կարող է մեր պարտիան փակուղուց դուրս բերել պարտիական շինարարության և բանվորական մասսաների մեջ սոցիալ-դեմոկրատական աշխատանքի վերածնունդն իսկ նախապայման: Ապա տեղում լենինյանը, վստահ Ռուսաստանի բանվոր դասակարգի ու նրա վերածնվող ավանգարդի՝ բոլշևիկյան պարտիայի անխուսափելի հաղթանակին ընդդեմ ունակ-ցիայի ուժերի, խորը օպտիմիզմով եզրափակում է. «Հակառակ ոստիկանական բոլոր ծանր պայմաններին, չնայած սև ունակցիայի ստոր-գրովակայության և մոլեգնությանը, կենդանի է ունակցիոն ոգին Ռուսաստանի պրոլետարիատի մեջ, ուժեղ է բանվոր դասակարգի առաջավոր տարրերի սոցիալ-դեմոկրատական գիտակցությունը, ամուր է սերը դեպի անկեղծ աշխատանքը»:

¹ Ս. Սպանդարյան, Հոգովածներ, Նամակներ և փաստաթղթեր, Մոսկվա, 1958, էջ 269:

² Նույն տեղում. էջ 271:

պանծալի ՌՄԴԲԳ-ն: Հաշվի առնելով բանվորական այդ տրամադրությունը, Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովը հաստատ հավատով ձեռնամուխ է լինում պարտիական շինարարության մեծ գործին, որի առաջին քարն էլ հենց կլինի համապարտիական կոնֆերանցիան, և բոլոր պարտիական տարրերին կոչ է անում համախմբվելու նրա շուրջը, սպասական գործը՝ ՌՄԴԲԳ վերածնունդն իրականացնելու համար»:

Ս. Սպանդարյանը պարտիայի Պրագայի (6-րդ) կոնֆերանսում (1912 թ. հունվար) ընտրվեց ՌՄԴԲԳ Կենտկոմի և նրա Ռուսական բյուրոյի անդամ: Կոնֆերանսից վերադառնալով, նա Ռուսաստանում հսկայական աշխատանք տարավ կոնֆերանսի որոշումների մասսայականացման ուղղությամբ: Վ. Ի. Լենինը որոշ ժամանակ մանրամասն տեղեկություններ չունենալով Կենտկոմի Ռուսական բյուրոյի գործունեության և պարտիական կազմակերպությունների վիճակի մասին, խիստ անհանգստացած 1912 թ. մարտին գրում է Որջոնիկիին և Կենտկոմի Ռուսական բյուրոյի մյուս անդամներին, որով պարտավորեցնում է ամեն կերպ հայտնել պարտիական կազմակերպություններում պատգամավորների ելույթների մասին, ուղարկել կազմակերպությունների բանաձևերը կոնֆերանսի որոշումների նկատմամբ ունեցած վերաբերմունքի, դրամական միջոցների մասին և այլն: Լենինի այս գրությունը, որ զետեղված է Ս. Սպանդարյանի գրախոսվող ժողովածուի մեջ (էջ 277—279), ցույց է տալիս, թե Լենինը Կենտկոմի Ռուսական բյուրոյի (որի անդամն էր Ս. Սպանդարյանը) գործունեությանը որքան մեծ նշանակություն է տվել:

Գրախոսվող ժողովածուում զետեղված են Ս. Սպանդարյանի՝ արտոգրված էջ Ի. Լենինին գրած 5 նամակներ, որոնցից 4-ն ամբողջությամբ առաջին անգամ են հրատարակվում: Այդ նամակները ցույց են տալիս Ս. Սպանդարյանի անհողողող կամքը, անօրինակ կայունությունը, որին չեն կարողացել ընկճել ոչ արտոգրի դաժան պայմանները, ոչ նյութական ծանր վիճակը, ցույց են տալիս նրա խորը հավատարմությունը Ռուսաստանի և միջազգային պրոլետարիատի անխուսափելի հաղթանակը:

1914 թ. մարտի 15-ին Վ. Ի. Լենինին ուղարկած նամակում Ս. Սպանդարյանը գրում է. «Հղում եմ Ձեզ և Նադեժդա Կոնստանտինովնային հազար ողջույններ», ապա հրճվանքով նշելով ունակցիոն վերելքը Ռուսաստանում, սրտի ցավով ավստոսանք է հայտնում, որ ինքր արտոգրում գտնվելու պատճառով հնարավորու-

¹ Նույն տեղում:

թյուն շունի երկրի ռեկուլցիոն մեծ իրադարձություններին անձամբ մասնակցելու, միաժամանակ նշում է. «Ես այնուամենայնիվ հաստատ հույս ունեմ, որ հետո չէ «օրը» և որ մենք դեռ պիտանի կլինենք գործի համար: Առայժմ այստեղից որքան հնարավոր է հետևում եմ բոլոր իրադարձություններին և հոգիս հրճվում է»¹:

Ս. Սպանդարյանը միաժամանակ ցույց է տալիս, որ ինքը արտորում ձեռքերը ծալած չի նստել: այլ շարունակում է պայքարը ռեկուլցիայի համար, պայքարում է լիկվիդատորների, մենշևիկների դեմ: «Այստեղ ևս մենք տապակվում ենք մեր սեփական յուզում և հաղթանակ» ենք տանում «նրանց» (մենշևիկների—Ա. Մ.) դեմ»²:

1915 թ. մարտի 12-ի նամակը, որը գետնից է ժողովածուում, հրապարակվել է «Պրոլետարական ռեկուլցիա» ամսագրի 1936 թ. № 7-ում և Ս. Սպանդարյանի 1939—1940 թթ. հրատարակած ժողովածուում: Մնացած երեք 1915 թ. օգոստոսի 20-ին, սեպտեմբերի 28-ին և 1916 թ. մայիսի 28-ին դրած նամակներում Ս. Սպանդարյանը դրում է իր խորը հավատի մասին գեպի ռեկուլցիայի հաղթանակը, իր և ընկերակիցների ոգու արիության ու կայտառության մասին: «Մենք,— գրում է նա,— մեզ առույգ ենք զգում և տրամադրված ենք օպտիմիստորեն: Մենք ընդհանրապես օպտիմիստներ ենք»³:

1915 թ. սեպտեմբերի 28-ի նամակում. «Մենք ողջ և առույգ ու առույգ ենք և մտադիր ենք այսուհետև ևս նույն վիճակում մնալ: Այդ բոլորը ցանկանում ենք նաև Ձեզ»⁴:

1916 թ. մայիսի 28-ի նամակում. «Մենք ոգով արի ենք և նույնը ցանկանում ենք Ձեզ» (էջ 287):

Ժողովածուում գետնից է շողվածները ուղղված են ցարական ինքնակալության, բուլժուա-նացիոնալիստական պարտիաների, լիկվիդատորության, պրոլետարիատի բոլոր գույնի թշնամիների դեմ, նվիրված են պարտիական շինարարության, գրականության և արվեստի հարցերին: Նրանք ցույց են տալիս, որ բոլշևիկյան պարտիան հանձին Սուրեն Սպանդարյանի ունեցել է բազմակողմանիորեն զարգացած, կրթված մարքսիստ, որն իր հատուկ գրչով մերկացրել ու հարվածել է պարտիայի թշնամիներին՝ հանուն ռեկուլցիայի, հանուն աշխատավորության ազատագրման:

Շողվածները ցույց են տալիս, որ Ս. Սպանդարյանը եղել է տաղանդավոր հրապարակախոս ու ժուռնալիստ, բոցաշունչ պրոպագանդիստ ու ագիտատոր, համոզված ու հետևողական լենինյան:

Ս. Սպանդարյանի ժողովածուի ներածականում համառոտ կերպով ցույց է տրված Ս. Սպանդարյանի ռեկուլցիոն գործունեությունը Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում, Պետերբուրգում, Մերձբալթյան երկրներում, նրա ակտիվ մասնակցությունը ՌՄԴՊ Պրագայի (6-րդ) կոնֆերանսի նախապատրաստմանը և բուն կոնֆերանսի աշխատանքներին, նրա որոշումների մասսայականացմանը Ռուսաստանում: Ս. Սպանդարյանը Պրագայի կոնֆերանսում ընտրվելով ՌՄԴՊ Կենտկոմի ու նրա պրակտիկ կենտրոնի՝ Ռուսական բյուրոյի անդամ, մեծ աշխատանք է տարել լենինի գիրեկտիվների կենսագործման ուղղությամբ Ռուսաստանում, մինչև իր ձերբակալությունն ու ցմահ արսորումը: Ս. Սպանդարյանը մինչև իր հիասքանչ կյանքի վերջը չի դադարեցնում իր բեղմնավոր ռեկուլցիոն գործունեությունը:

Դրախոսվող ժողովածուն տպագրության է պատրաստել և նրա ներածականը, ծանոթագրություններն ու Ս. Սպանդարյանի կյանքի ու գործունեության գլխավոր տարեթվերը կազմել է Գ. Ս. Հակոբյանը: Ժողովածուն հավանություն է ստացել ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի կողմից: Նյութերը նայել է Ս. Սպանդարյանի կինը Ուլա Վլադեսլավովնա Սպանդարյանը:

Նշելով որպես ողջունելի քայլ և շնորհակալ աշխատանք Ս. Սպանդարյանի երկերի ժողովածուի վերահրատարակումը, միաժամանակ անհրաժեշտ ենք համարում ասել հետևյալը. կազմող ընկ. Հակոբյանը միանգամայն ճիշտ է վարվել՝ կատարելով նյութերի խիստ ընտրություն, բայց ներկա ժողովածուից դուրս է թողել Ս. Սպանդարյանի՝ դաշնակցության դեմ ուղղված մի քանի արժեքավոր հոդվածներ («Մամուլ», «Ընկեր խմբագիր», «Քրտնում են...», «Մամուլ» և այլն), գրված 1906 թվականին, 1908—1910 թթ. գրած մի քանի հոդվածներ («Մ. Գորկին դաստիարակության մասին» և ուրիշներ): Հանված է նաև «Մի խումբ արսորական-բոլշևիկների նամակը «Вопросы страхования» ժուռնալի խմբագրությանը», գրված 1916 թ. մարտին, որի գրելուն մասնակցել և ստորագրել է Ս. Սպանդարյանը: Ժողովածուում պետք էր թողնել նաև ՌՄԴՊ Կենտկոմի օրգան «Սոցիալ-դեմոկրատի» ներդրվող Ս. Սպանդարյանի մասին:

Ներկա ժողովածուի մեջ կա հետևյալ անճշտությունը՝ Ս. Սպանդարյանի 1916 թ. փե-

¹ С. С. Спандарян, Статьи, письма и документы, էջ 283:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 286:

⁴ Նույն տեղում, էջ 287:

տերվարի 4-ին իր երեխաներին դրած ուսերեն նամակի մասին կազմողը գրում է՝ «Թարգմանություն հայերենից» (էջ 324)։ Ս. Սպանդարյանը հայերեն նամակներ է գրել միայն հորն ու Բ. Շահ-Պարոնյանին։ Ընտանիքին և երեխաներին ուղարկած բոլոր նամակները, որոնց թվում նաև հիշյալ նամակը՝ գրել է ուսերեն։

Ս. Սպանդարյանի երկերի ժողովածուի 1939—1940 թթ. հրատարակություններից հետո գտնվել են նոր փաստաթղթեր, ինչպիսին է նրա «Երեք հոսանքներ» հոդվածը, որը լույս է տեսել 1908 թ. հունիսի 9-ին «Գուգուկոմ»-ը, և հայտնաբերվել է 1954 թվականին (Ճիշտ է, անավարտ, շարունակելի), Կրասնոյարսկի երկրային պարտիական և պետական արխիվներում գտնվել են Ս. Սպանդարյանին վերաբերող ժանդարմական շատ նոր փաստաթղթեր։ Այդ փաստաթղթերի մի մասը, ինչպես նաև վերը նշված հոդվածը պետք է զետեղվեն ներկա ժողովածուի մեջ։ Նրա մեջ պետք է զետեղվեն նաև 1915 թրվականի հուլիսին արսորում գտնվող Կենտկոմի անդամների, 4-րդ Պետական գումայի բոլշևիկյան հնգյակի և պարտիական ակտիվի խորհրդակցության բանաձևը, որն ըստ այդ խորհրդակցության մասնակից ընկ. Կ. Սվերդլովայի, գրել են Յա. Մ. Սվերդլովը, և Ս. Սպանդարյանը¹։

ՍԻԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալը պետք է շարունակի ականավոր բոլշևիկին վերաբերող փաստաթղթերը հայտնաբերելու գործը՝ ժողովածուն ավելի յրիվ տեսքով հրատարակելու համար։

Ս. Սպանդարյանին նվիրված նեկրոլոգում Կենտկոմի օրգան «Սոցիալ-դեմոկրատ» գրում է, որ «Սպանդարյանը... մասնակցում էր Կենտկոմի Ռուսական տպարանի կազմակերպման գործին, ընտրական պատճառների և Կենտկոմի մի շարք կոչերի հրատարակման գործին»²։ Ն. Դ. Ստասովյան 1926 թ. «Զարյա Վոստոկում» գրել է, որ «ՌՍԴԲՊ ընտրական պատճառներ», «Հանուն պարտիայի» կոչերը գրել է Ս. Սպանդարյանը³, որի հիման վրա 1937 թ. ՀԿ(Բ)Պ Կենտկոմին կից Կուսպատ ինստիտուտը այդ կոչերը զետեղեց Ս. Սպանդարյանի մասին կազմած հոդվածների ժողովածուի մեջ, իբրև նրա գրած կոչերը⁴։ 1939—1940 թթ. լույս

տեսած հայերեն և ուսերեն ժողովածուներում զետեղվեց «Հանուն պարտիայի» կոչը։ Պարզեցեց, որ դրանք պարզապես թյուրիմացություններ են։ «ՌՍԴԲՊ պատճառներ» գրել է Վ. Ի. Լենինը (տե՛ս հ. 17, էջ 226—234), «Հանուն պարտիայի կոչը» գրել է Ի. Վ. Ստալինը (տե՛ս հ. 2, էջ 250—256)։ Բայց անհերքելի փաստ է, որ Ս. Սպանդարյանը եղել է մի շարք կոչերի ու թուղթիկների հեղինակ, որոնք անհրաժեշտ է հայտնաբերել, համեմատել, ճշտել և զետեղել նրա ժողովածուի մեջ։ 1912 թ. Ն. Դ. Ստասովյան ուղղած նամակում Ս. Սպանդարյանը գրում է. «Թանկագին բարեկամ, խնդրում եմ ձեզ բոլոր օտար ազգի բաները փոխել իսկական ուսերենով։ Չէ որ բանվորների համար այդ ավելի հասկանալի կլինի չևտո, չե՛ք գտնում արդյոք, որ ու. դ. ֆրակցիայի մասին եղած ամբողջ ֆրազը մի փոխանհարմար է։ Այնտեղ ստված է. «Ռուսաստանի ազատագրման համար... Պրոլետարիատի ազատագրման համար... հարկավոր է արժանի... ու. դ. ֆրակցիա ունենալ նաև 4-րդ Պետական Դումայում»։ Անհամապատասխանություն է ըստացվում հակալական խնդիրների (ազատագրումը և ապաճորոտացումը) և միջոցների (պառլամենտական ֆրակցիայի) միջև։ Այնինչ, ես բոլորովին այդ չէի ցանկացել և հուսով եմ, որ դուր էլ այդպես եր մտածում»։ Ապա Սպանդարյանը առաջարկում է այդ ֆրազը խմբագրել այսպես. «Ռուսաստանի ազատագրության և այլն, պրոլետարիատի ազատագրության համար և այլն, ծայր աստիճան անհրաժեշտ է ներկայիս բաղարական պայմաններում օգտագործել Դումայի ամբիոնը, այդ իսկ պատճառով 4-րդ Պետական Դումայում... ու. դ. ֆրակցիա, որը կլինի երեք Պետական գումաների ու. դ. ֆրակցիաների հաջորդը և արժանի ժառանգությունը»⁵։

Համեմատությունը ցույց է տալիս, որ մեջբերած մտքերը չեն համընկնում ոչ «ՌՍԴԲՊ պատճառներ», ոչ էլ «Հանուն պարտիայի» կոչերի բովանդակությանը, որով ապագողվում է, որ իրոք Ս. Սպանդարյանը վերը թված կոչերի հեղինակը չէ։ Բայց ինչ-որ կոչի հեղինակ նա եղել է, ուղարկել է տպագրության, խմբագրությունը ինչ-որ փոփոխություններ է մտցրել, որի հետ ինքը համաձայն չի եղել։ Նշանակում է պետք է շարունակել պրպտումները և գտնել Ս. Սպանդարյանի գրած կոչերը։

Այնուհետև, և՛ ինքը Ս. Սպանդարյանն է գրում, որ նա «Բազմաթիվ անգամ գրել է Բաբու», և Ստ. Շահումյանն է գրում՝ «Թր հեռա»։

¹ С. С. Спандарян. Статьи, нисьма и документы, 1958, էջ 280։

² Նույն տեղում։

³ Տե՛ս «Октябрь», ամսագիր, 1956, № 7, էջ 162։

⁴ «Սոցիալ-դեմոկրատ», 1916, № 56, 6 հոկտեմբերի։

⁵ «Զարյա Վոստոկ», 26 սեպտեմբերի, 1926, № 1286։

⁶ Տե՛ս Սուրեն Սպանդարյան «Ժողովածու», 1937, էջ 70—78։

վորությունից Սուրենը միշտ հետաքրքրվում էր կողկապան գործերով և երբ այստեղից մի լավ լուր էր ստանում, այնչափ ուրախություն ու օգետություն էին արտահայտում նրա նամակները»¹։ Նշանակում է Ս. Սպանդարյանը արշուրից աշխույժ նամակագրություն է ունեցել նաև կողկասի պարտիական կազմակերպության և Ստ. Շահումյանի հետ, որոնցից ոչ մեկը (ոչ Սպանդարյանի գրածները, ոչ էլ Շահումյանի

գրածները) չի գտնվել։ Այս ուղղությամբ էլ պահանջվում է համապատասխան աշխատանք։

Աննկուն սեռությունների, խոհուն մտածողի երկերի ժողովածուն դաստիարակչական մեծ նշանակություն ունի կոմունիզմի շինարարների համար։ Մեզ թվում է ՍՄԿՊ Կենտկոմին առնթիվ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալը պետք է ձեռնամուխ լինի Ս. Սպանդարյանի երկերի ժողովածուի հայերեն լեզվով հրատարակմանը։

Ա. ՄԵԼԻՔՈՆՅԱՆ

«Պայքար», № 38, 18 սեպտեմբերի 1916:

Վ. Ս. ՆԱԼԲԱՆԿՅԱՆ, *Թբիլիսին հայ մատենագրություն մեջ*, Երևան, Հայպետհրատ, 1958:

Մեր հիշողության մեջ դեռևս կենդանի է այն հուշմունքը, որը մենք բոլորս, բոլոր թբիլիսցիներս և բոլոր վրացիներս ապրեցինք մեր անվանի մայրաքաղաքի՝ Թբիլիսիի 1500-ամյակի տոնակատարության օրերին։ Թբիլիսին գովերգող ինչքան բանաստեղծություններ ասվեցին, ինչքան շնորհավորանքներ ու նվերներ ստացավ նա Շատ բան ասվեց և գրվեց Թբիլիսիի մասին նաև եղբայրակից ուսպուրլիկաներում։ Օրինակ, Թբիլիսիի հորեկյանին Երևանի թերթերը հատուկ համարներ նվիրեցին, Թբիլիսիի մասին Հայաստանի ալլեալ ամսագրերում ևս բազմաթիվ հոդվածներ տպագրվեցին։ Արտակարգ ուրախություն պատճառեց թբիլիսցիներին երևանցիների մի մեծ նվերը՝ նրանք Երևանի մեծ ու գեղեցիկ փողոցներից մեկը Թբիլիսիի անունով կոչեցին։ Պարզ է՝ հայ ժողովրդի ազգային սրտահույզ արձագանքը թբիլիսցիների համար մեծ բավականություն էր։ Եվ դա բոլորովին էլ դարձանալի չէր, այլ ընդհանուրապես, միանգամայն բնական էր։ Այդ ցույց տալու համար տեղին կլինեք զոնե մեկ անգամ հայացք ձգել մեր ժողովուրդների համագործակցության բազմադարյան պատմությանը։

Մոտավորապես երկու հազար հինգ հարյուր տարի է, ինչ կողք-կողքի ապրում են վրացիները և հայերը։ Դա կարճ ժամանակ չէ։ Այս ժամանակի ընթացքում բազմաթիվ ուժեղ պիտություններ են տապալվել ու ժողովուրդներ են սրբվել երկրի երևալից, իսկ մեր համեմատաբար վերջին ժողովուրդները այսպես անպարտիկորեն տարել են բազմատեսակ դժվարություններ, պահպանել իրենց և իրենց հիասրանչ կուլտուրան։ զրա պատճառներից մեկը այս երկու ժողովուրդների անխորտակելի բարեկամությունն է։ Նրանք դժվարության ամեն մի պահի օգնում էին միմյանց, և երբևէ չէին

թողնում եղբայրակցին վտանգի մեջ։ Հայաստանը առաջինն էր ստանում հարավից ներխուժած թշնամու հարվածը և դրանով թեթևացնում՝ Վրաստանի պաշտպանությունը։ Իր հերթին Վրաստանը հյուսիսից ներխուժող քոչվոր ցեղերից պաշտպանում էր դեպի Հայաստան տանող մուտքը։

Բայց այստեղ պետք է ասել, որ հարավից մեր ժողովուրդների վրա կախված վտանգը միշտ էլ ավելի մեծ է եղել։

Սակայն մեր բարեկամությունը միայն պայքարի ճանապարհին չէր հաստատվում։ Այն մեր ժողովրդի կյանքի ալլ կողմերը ևս ընդգրկեց։ Հայերի ու վրացիների միջև միշտ էլ եղել է սնտեսական և կուլտուրական կենդանի համագործակցություն։ ճանապարհները լինելին սոսկալական քարավաններով, իսկ հայ զավթիին հաջողվեց հայերեն կարգալ «Քարթլիս ցխովրերան» (Պատմություն վրացի) ու «Եռլանիկի նահատակությունը», ինչպես վրացիին վրացերեն կարգալ Սանդուխտ կուլսի նահատակության պատմությունը ու Բաղետո առարչալի վարրը։ Մեր ժողովուրդների մոտիկ բարեկամության ապացույցն է նաև այն, որ վրացիներն ու բազմաթիվ հայերեն բառեր կան և ընդհանուրապես։ Շատ բառեր, որոնք մինչև անգամ ամբողջովին վրացերեն են հնչում, ինչպես օրինակ՝ միամիտ, երկամալի (երկամյա) և այլն, ծագումով հայկական են։ Նույնպես և հայերենում կան մի շարք վրացական ծագում ունեցող բառեր։ Այդպես է նաև ճարտարապետության մեջ և արվեստի ալլ բնագավառներում, դիտություն մեջ և առօրյա կենցաղում։ Վրացական ստանդարտի վաղը այսօր այնպես է աճում Հայաստանի տար արևի տակ, ինչպես իր հայրենիքում։